

ՍԵՌԱՄԵՏՈՒԹՅԱՆ ԳՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐՆ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ

Վ. Վ. ԳԱՐԻՆԵՅԱՆ

Համաձայն լեզվաբանության մեջ գոյություն ունեցող հրահանգչական (կարգադրողական) մոտեցման (Prescription) լեզվի մի որևէ տարրերակ ափելի մեծ ներհատուկ արժեք ունի, քան մնացածները, հետևաբար ողջ հասարակությունը պետք է կիրառի հենց այդ տարրերակը: Այս «ավտորիտար» տեսակետը թարրովում է հատկապես քերականության և բառագիտության, նաև հնչյունաբանության մեջ: Նախընտրելի համարվող տարրերակը սովորաբար ստանդարտ գրավոր լեզվի տարրերակն է՝ ներկայացված բառարաններում, քերականության և այլ ձեռնարկներում: Սրան հակառակ է նկարագրական մոտեցումը, որի հիմնական նպատակն է նկարագրել և բացատրել լեզվի գործածության կաղապարը բոլոր տարրերակներում, անկախ այն բանից, թե դրանք սոցիալապես հեղինակավոր են, թե ոչ: Այս վերջին մոտեցումը, որ հիմնականում բնութագրական է հատկապես ժամանակակից արևմտյան և մասնավորապես նաև անգլիալեզու լեզվաբանության համար, ելնում է նաև այն նկատառումից, որ լեզուն անընդհատ փոփոխվում է, և փոփոխություններ են տեղի ունենում նաև նրա կիրառության մեջ: Ժամանակակից լեզվաբանները թեև չեն ժխտում ստանդարտ լեզվի կարևորությունը, բայց ստանդարտ լեզվի կանոններին շհետևող այլ խոսվածքներն ու տարրերակներն էլ չեն պիտակում որպես սխալ, անտրամաբանական, այլանդակ և այլն:

Հրահանգչական (կարգադրողական) այս մոտեցման մեջ երբեմն տարրերակում է մտցվում հրահանգչական (prescriptive) և արգելական (proscriptive) կանոնների կամ փաստորեն այդ մոտեցման երկու կողմերի միջև: Առաջինները սահմանում, հանձնարարում են ընդունելի գործածությունները, երկրորդները նշում են այնպիսի գործածություններ, որոնցից պետք է խուսափել:

Հրահանգչական մոտեցումը հաճախ քննադատվել է իր ծայրահեղ բնույթի պատճառով, գրա առանձին դրսևորումները դարձել են ծաղրի, ոստիրայի առարկա: Այս կապակցությամբ բավականին հետաքրքիր է, օրինակ, Նոր Անգլիայի անգլերեն լեզվի ուսուցիչների ընկերության «Leaflets» պարբերականում 1979 թ. սպաղարված կանոնների փոքրիկ հավաքածուն, որտեղ յուրաքանչյուր կանոն սահմանում է, թե ինչ չի կարելի անել, սակայն հենց այդ կանոնում միտումնավոր կերպով թույլ է տրված հենց մերժվող կիրառությունը, օրինակ՝ Nobody should never use double negatives կամ A writer should not shift your point of view և այլն: Այս հավաքածուն, որ հետագայում արտատպվել է English Today պարբերականում, հետո մեջբերվել «Անգլերեն լեզվի հանրագիտարանում»-ում¹, բացառություն չէ: Այդպիսի «կանոններին» հավաքածուները 1970-ական թվականներին բավականին տարածված են եղել ամերիկյան ուսումնական հաստատություններում:

Խոսքն, իհարկե, ակնհայտ լեզվական սխալների մասին չէ: Ծանկացած կրթված մարդ գիտի, որ, օրինակ, չի կարելի ասել՝ I don't know nothing կամ You was wrong, սակայն անգամ կրթված մարդիկ տարբեր կերպ են գործածում լեզուն, կամ նույն մարդը տարբեր պայմաններում դիմում է տարբեր ձևերի գործածության (օրինակ՝ ես չեմ լեզվի պաշտոնական և խոսակցական տարրերակներում):

Այստեղ լեզվաբանների համար բացարձակ ճշտության գաղափարը կիրառելի չէ. այն բավարար չէ լեզվի գործածության տարրերակները բացատրելու համար: Հարկ է լինում ներմուծել հարաբերական հարմարություն, համապատասխանություն կամ տեղիություն հասկացությունը, այսինքն՝ որքանով է հարմար լեզվի տվյալ տարրերակն օգտագործել տվյալ իրացությունից: Անը Օրինակ, կրճատ ձևերը լայնորեն կիրառվում են բանավոր ոչ պաշտոնական խոսքում և երբեմն՝ նմանատիպ գրավոր խոսքում, սակայն անընդունելի են պաշտոնական գրավոր խոսքում: Այս կամ այն կրճատ ձևի գործածման թույլատրելիությունը հիմնականում կախված է կոնկրետ իրադրությունից:

¹ David Crystal, The Cambridge Encyclopedia of the English Language. Cambridge University Press. 1995. p. 366.

Հարմարության եզրը, սակայն, մի փոքր հստակ չէ, և հաճախ քննադատվում է որպես «թաքնված ճշմարտություն» հրամցնելու փորձ: Եզրի կողմնակիցների կարծիքով հարմարության ասելով պետք է հասկանալ լեզվի քնականությունը՝ նրա այնպիսի գործածություն, որ խոսքը քնական ճշի, ուշադրություն չհրավիրի իր վրա և քննադատության շարժանանա: Տեղին, համապատասխան կամ հարմար լեզու նշանակում է նաև տվյալ իրադրության մեջ իր գործառույթը բավարար չափով կատարող լեզու:

Քննարկվող մոտեցումը ցանկացած լեզվի և հասարակության մեջ կարևոր դեր է կատարում, և չի կարելի այն անտեսել կամ արհամարհել: Որևէ կոնկրետ երևույթի կամ գործածության նկատմամբ այդպիսի մոտեցումը կարող է ձևավորվել տասնամյակների, երբեմն էլ հարյուրամյակների ընթացքում: Տրամաբանական է, որ որոշ երևույթներ սկզբում որակվեն որպես ոչ տեղին, անպատշաճ, հետո դառնան անընդունելի, բայց կան նաև իրադարձությունների՝ հակառակ ուղղությամբ զարգացման բազմաթիվ օրինակներ:

Թվում է, թե անգլերեն լեզվի գործածության մեջ տեղին — ոչ տեղին գործածության փոփոխում գտնվող մի երևույթի որոշ տարրեր արդեն միտում ունեն հայտնվելու հրահանգչական մոտեցման «ազդեցության ոլորտում»: Այդ երևույթը sexist լեզվի կամ, ինչպես հավանաբար ճիշտ կլինե՞ր թարգմանել, սեռամետ լեզվի գործածությունն է:

Այս խնդրին սկսել են ուշադրություն դարձնել 1960-ական թվականներից: Խոսքը լեզվի այնպիսի գործածության մասին է, որը տղամարդկանց և կանանց սոցիալական դերերի վերաբերյալ սքողված անխափաչ վերաբերմունք չի արտահայտում: Քննադատությունը հիմնականում ուղղված է անգլերենի քերականական այն կառույցների և բառապաշարի այն դրսևորումներին, որոնք արտահայտում են աշխարհի վերաբերյալ պատկերացում տղամարդու տեսանկյունից, և այդպիսով մեկնաբանվում են (հատկապես կանանց կողմից) որպես հասարակության մեջ կնոջ ցածր կարգավիճակն անմրապնդող գործոններ: Թեև այս մոտեցումն այժմ առկա է համարյա բոլոր հիմնական եվրոպական լեզուներում, ինչը վկայում է երևույթի ավելի շատ սոցիալական, քան լեզվական լինելու մասին, անգլերենում այն ավելի ակնհայտ դարձավ ԱՄՆ-ում ֆեմինիստական շարժումից հետո:

Սեռամետ լեզվի դրսևորումները հիմնականում կարելի է դիտարկել երկու քննադատում՝ բառապաշար և քերականություն:

Բառապաշարում սեռամետ լեզվի դեմ պայքարի հիմնական նպատակը որևէ կոնկրետ սեռ շարտահայտող կամ ընդհանրական սեռի (generic) իմաստ ունեցող հասկացությունների համար գործածվող գոյականների փոխարինումն է այնպիսի գոյականներով, որոնք որևէ կոնկրետ սեռ ցույց չեն տալիս կամ կարող են վերաբերել թե՛ արական, թե՛ իգական սեռի պատկանող անձի: Հանձնարարվում է, օրինակ, chairman բառը փոխարինել chair-ով, chairperson-ով կամ presiding officer-ով, իսկ նախագահողի՝ տվյալ դեպքում կին լինելու պարագայում՝ chairwoman-ով, և այլն: Թեև այս և առաջարկվող այլ տարբերակներում հակասություններ և վիճելի հարցեր շատ կան, վիճաբանությունների հիմնական առարկան այն է, թե որն է այս բարեփոխումների թույլատրելի սահմանը: Օրինակ, կարելի՞ է փոխարինել man բառը դարձվածքներում (the man in the street...) կամ բաղադրյալ գոյականներում (man-hole, postman, sportsman):

Ամեն դեպքում նմանօրինակ փոփոխությունների պահանջը և տարբեր խավերի կողմից գործադրվող ճնշումը այնքան մեծ են, որ այդ փոփոխությունները շատ դեպքերում պարզապես պարտադիր են դառնում, արտացոլված են դասագրքերում և ձեռնարկներում, ուսուցանվում են դպրոցներում և համալսարաններում, իսկ որոշ դեպքերում, ինչպես, օրինակ, թափուր աշխատատեղերի հայտարարություններում, այդ աշխատանքների նկարագրության ու պայմանների մեջ, այդ կանոններին շեղանքը գործատիրոջ համար ճշի է ծանր հետևանքներով: Եստ ազգային և միջազգային կազմակերպություններ ունեն իրենց աշխատակիցների համար խիստ հանձնարարելի, այլ խոսքով՝ պարտադիր հրահանգ-ուղեցույցներ, որոնց մասին կխոսվի ստորև:

Նշված հանձնարարականների հետզհետե ավելի ու ավելի լայն կիրառության օրինակ է Ms. հապավումը, որը որպես շեղոք այլընտրանք եկել է փոխարինելու Miss-ին և կամ Mrs.-ին: արտացոլելով կնոջ ամուսնական կարգավիճակի կարևորության՝ հասարակության փոփոխված գնահատականը: Չէ՞ որ ամուսնացած կամ չամուսնացած տղամարդիկ դիմումների ձևերի մեջ չեն տարբերակվում, բոլորն էլ Mr. են: Տղամարդու համար ժամանակին կարևոր է եղել տարբերակել, թե կինը ինչ ամուսնական կարգավիճակ ունի, ուստի օրիորդների համար գործածել են Miss, իսկ ամուսնացած կանանց համար՝ Mrs.: Եթե անգամ պատմության որոշ ժամանակահատվածներում կնոջ համար այդ տարբերակումը կարևոր է եղել, այս ժամանակակից կանայք գտնում են (համենայն դեպս Մեծ Բրիտանիայի, ԱՄՆ կամ այլ արևմտյան երկրների անգլոփախոս կանայք), որ կնոջ ամուսնական կարգավիճակը չպետք է կարևորություն ունենա և չպետք է հետաքրքրի ո՛չ տղամարդկանց, ո՛չ էլ այլ կանանց: Ms. ձևն այժմ լայնորեն ընդունված է և՛ բանավոր դիմումներում, և՛ պաշտոնական գրավոր խոսքում, հատկապես երբ հայտնի չէ, թե տվյալ կինն ամուսնացած է, թե ոչ, և երբ այդ կնոջը դիմում են

առաջին անգամ: Երբ ամուսնացած լինելու փաստը հայտնի է, կարելի է գործածել Mrs., իսկ եթե կինը հատկապես շեշտում է այդ փաստը, կամ նախընտրում է իր անվան կողքին գրել Mrs., այլոց կողմից դա անելը պատշաճության պարտադիր կանոն է:

Անգլերենում քերականության մեջ հիմնական խնդիրը երրորդ դեմքի եզակիում լեզոք շնչավոր դերանվան բացակայությունն է, ինչը բարդություններ է առաջացնում ընդհանուր սեռի գոյականներից հետո, երբ կետը է խուսափել այդ գոյականները նույն նախադասության մեջ երկրորդ անգամ կրկնելուց: Օրինակ, հետևյալ տիպի նախադասությունների մեջ student գոյականին ավանդաբար հաջորդում էր he դերանունը (կամ էլ դրա հոլովված his կամ him ձևերը): If a student wants to know a lot and get a high mark, he/she should study well.

He-ի գործածությունը այժմ անընդունելի է համարվում լեզվի կրթված կրողների մեծ մասի կողմից: Չէ՞ որ, եթե վերջիններ կոնկրետ այս օրինակը, ուսանողները միայն արական սեռի շնչ: Այսպիսի կիրառությունները, հատկապես ըստ ֆեմինիստական շարժման ակտիվիստների, հնացած մտածելակերպի և հայրիշխանության ժամանակների արգասիք են և ենթադրում են, որ որոշ մասնագիտություններ, զբաղմունքներ և պաշտոններ միայն տղամարդկանց համար են:

Որպես ելք, նման տիպի նախադասությունների համար սովորաբար առաջարկվում է արդեն նաև կիրառվում են հետևյալ տարրերակները.

- Կոնկրետ սեռ շարտահայտող գոյականից հետո օգտագործել he or she կամ she or he:
- Գրավոր խոսքում երբեմն գործածում են (s)he, սակայն սա հնարավոր չէ կիրառել այն դեպքում, երբ հոլովված ձևի անհրաժեշտություն կա, քանի որ his-ը կամ him-ը her-ից տարրերվում են ոչ թե մեկ, այլ մի քանի տառով, և հնարավոր չէ դրանք նույն ձևով առնել փակագծերի մեջ:
- Այլ և շատ ընդունված տարրերակ է նախադասության կառուցվածքի փոփոխությունը՝ օգտագործելով հոգնակի թվով գոյական և դրանից հետո՝ they If students want to know a lot and get high marks, they should study well
- Հարցի ավելի արմատական լուծման փորձ է նոր դերանվան հորինումը, ինչը, դեռևս հաջողությամբ չի պսակվել, թեև կան առաջարկված քաղմաթիվ տարրերակներ՝ co, (cos, coself), E(objective I), et(etself), heesh, hesh, hir, hirm, hizer, ho, jhe, mon, na, ne, person(in short, per), po, tey, thon(thons), thonself, xe²:

Այստեղ հավանաբար տեղին է հիշել Պետրոս Դուրյանի և իր ժամանակակիցների կողմից նէ (որ համահունչ է անգլերենում առաջարկված տարրերակներից մեկին) դերանվան ներմուծման շահչողված փորձը: Դա միանգամայն բնական է. անձնական դերանունների քանակը ցանկացած լեզվում խիստ սահմանափակ է, դրանք ստեղծվում են, երբ լեզուն նոր է ձևավորվում, և դրանց քանակը փոխելը կամ անհնար է, կամ էլ շատ երկար ժամանակ է պահանջում:

Որոշ քերականական ձեռնարկներում նշվում է, որ սեռամետ լեզվից խուսափելու նպատակով եզակի թվով գոյականից հետո հոգնակի դերանուն դեմուց գործածությունը տարածվելու միտում ունի, և հոգնակի թվով դերանունները նկատի ունեն երկու սեռն էլ՝ If anyone calls while I'm gone, ask them to leave a message³, թեև պաշտոնական գրագրության մեջ այս տիպի օրինակներից այնուամենայնիվ խուսափում են:

Սեռամետ լեզուն, սակայն, հավանաբար պետք է դիտել որպես ավելի լայն հասկացություն, քան պարզապես որոշ բառերի, գարծվածների և քերականական կառույցների գործածությունը: Ավելի խորը զննության դեպքում պարզ է դառնում, որ գոյություն ունեն լեզվի և մտածողության մեջ այնքան խոր արմատներ ունեցող քաղմաթիվ արտահայտություններ, հասկացություններ և մտտեցումներ, որ դրանց սեռամետ բնույթն առաջին հայացքից անգամ չի գիտակցվում և կասկածի տակ չի առնվում: Սեռակառուցված կարող է ենթադրել, օրինակ, արական և իգական (թե՛ իգական և արական) սեռի գոյականների թվարկման հաջորդականությունը (օրինակ, պատկազրության ծեսի ժամանակ հայտարարվում է I now pronounce you man and wife և ոչ թե հակառակը): Նմանապես խաղում է նաև որոշ դեպքերում մեկ կամ մյուս սեռը ցույց տվող գոյականը բնահանրապես նշելու անհրաժեշտության հարցը, օրինակ, Ten people were killed and eighteen injured in the explosion, including five women նախադասության մեջ կարիք կա՞ կանանց առանձնացնել և հակադրել տղամարդկանց: Հարցն այստեղ զուտ լեզվական չէ, այլ քննության է առնվում միաժամանակ մի քանի հարթություններում՝ լեզվական, քաղաքական, սոցիալական, փիլիսոփայական և այլն:

Այս տեսակ ավելի լայն հարցադրումը կիրառելի է, անշուշտ, մարդկային կյանքի մի շատ կարևոր բնագավառի՝ կրոնի համար: Կրոնի լեզուն աշխարհընկալման տղամարդու տեսակետի վրա ապացույցն է: Այսօր տարածված հիմնական միաստված կրոններում աստված տղամարդ

² See David Crystal, նշվ. աշխ., էջ 368:

³ John C. Hodges and Mary E. White. Harbrace College Handbook. Harcourt Brace Jovanovich, Publishers. Orlando, Florida. p. 68.

է, և կրօնի պատմութիւնն էլ, գոնե քրիստոնեւորութեան մեջ (ուրեմն և անգլերեւում) տղամարդկանց պատմութիւնն է այն աստիճան, որ Աղամը ծնում է ...-ին, Արրահամը ծնում է ...-ին, Իսահակը ծնում է ...-ին և այլն: Երևութեան յման մեկնարանութիւնն արդեն դարձել է ջրեւարկման առարկա, և մի քանի տարի առաջ ամերիկայան մամուլում հայտնված այն պատմութիւնը, որ մի կին փորձում էր ապացուցել, որ աստված կինարմատ է եղել, բնավ էլ եղակի ղեկը չէ: Նման հարցի իմաստալից կամ անիմաստ լինելը բնականաբար դուրս է այս նշումի ցենսութեան շրջանակներից, սակայն բուն հարցադրման փաստը ցույց է տալիս, որ վերաբերմունքի նման փոփոխութիւնների ղեկը աստծո սեռի հարցը կասկածի առնելու հնարավորութիւնը ստեղծում է անհրաժեշտ միջոցառում և պայմաններ, որպէսզի «ավելի մանր և պակաս կարեւոր» հարցերը ինքնըստինքյան քննվեն այլ կերպ: Ասել է թե, երբ արդեն հասարակութիւնը ցենսութեան է առնում մտածողութեան կաղապարները, he-ի կողքին she գրելն արդեն ինքնըստինքյան պարտադիր է դառնում:

Սակայն վերաբերմունքի այս փոփոխութիւնները, որ նկատվում են հասարակութեան մեջ, չեն ենթադրում, թե ստանդարտ լեզուն պետք է արագ փոխվի կանխատեսելի ուղղութեամբ, կամ որ այդ փոփոխութիւններն անպայման կամայայտնաբերվեն լեզվում: Համաձայն he և man բառերի գործածութեան հաճախականութեան (կես միլիոն բառերի մեջ) մի ուսումնասիրութեան և ամերիկայան անգլերենում 1971 թ. ամեն 5.000 բառի մեջ դրանք հանդիպում էին 12 անգամ, իսկ 1979 թ.⁴ 4 անգամ: Ամենից առաջ այդ անկումը նկատվել է կանանց ամսագրերում, հետո՝ գիտական ամսագրերում, այնուհետև՝ թերթերում, և ամենաքիչը՝ կոնգրեսի պաշտոնական փաստաթղթերում⁴:

Պետք է հաշվի առնել սակայն, որ սա այն ղեկըն է, երբ փոփոխութիւնները գիտակցված ու ծրագրված են և գրավոր խոսքից անցնում են բանավորին, մինչդեռ լեզվում կատարվող փոփոխութիւնների գերակշիռ մասը սովորաբար գալիս է բանավոր խոսքից և հետո, երբ արդեն գոյութիւն են ունենում երկար ժամանակ գործածված կաղապարներ, ամրակայվում է գրավոր խոսքում: Վերոհիշյալ փոփոխութիւնների հավանական արագութիւնը հաշվարկել փորձելիս պետք է նկատի ունենալ նաև, որ գրավոր խոսքը մի քանի անգամ մշակվում, ուղղվում և խմբագրվում է, և եթե անգամ մեկը ոչ անպայմանորեն արական սեռ ենթադրող բոլականը (reader, scholar, student) անընդհատ փոխարինում է he-ով, խմբագիրը կարող է նույն հետևողականութեամբ առաջարկել he/she կամ he or she (she or he) կամ հեղինակը կարող է ինքն անել դա հաջորդ անգամ, նկատի ունենալով հրատարակչական-խմբագրական պահանջների մեջ նոր (և հետզհետե որպէս պարտադիր ընկալվող) այդ նոր հանձնարարականը և հասարակութեան փոփոխվող վերաբերմունքը, հատկապէս եթե նկատի ունենանք, որ շատ հրատարակչութիւններ, ազգային և միջազգային մարմիններ այժմ ունեն սեռամետ լեզվի գործածութեան գեմ զգուշացնող ուղեցույց-հանձնարարականներ: Դրանցից երկուսի ներկայացումը հավանաբար բավարար է երևութի բնութի և ծավալների մասին պատկերացում կազմելու համար:

Ամերիկայի լեզվաբանական ընկերութեան նմանօրինակ ուղեցույցում⁵ (1992) մասնավորապէս կան հետևյալ կանոնները.

- Պետք է խուսափել որևէ կոնկրետ սեռ ցույց չտվող գոյականից հետո այսպէս կոչված «արական ընդհանրական» (masculine generic) գործածելուց, ինչպիսին he-ն, է, man-ը կամ դրանով կազմված բաղադրյալ գոյականները (եթե, իհարկե, խոսքը միանշանակ արական սեռի գոյականների մասին չէ):
- Պետք է խուսափել «բնական ընդհանրականներ» (genuine generic) գործածելուց, ասես դրանց միայն տղամարդկանց են վերաբերում (Americans use lots of obscenities but not round women, օրինակը նույն աղբյուրից է— Վ. Գ.), ասել է, թե պետք չէ ենթադրել, որ American-ը միայն տղամարդ է:
- Պետք է խուսափել հատուկ ածանցների, մասնիկների կամ բառերի ավելացման միջոցով սեռի ավելորդ նշումից, օրինակ lady professor սակավ փաստորեն նկատի ենք ունենում, որ professor-ները սովորաբար տղամարդ են լինում, և կին professor-ի գոյութիւնը այնպիսի փաստ է, որ արժանի է հատուկ նշելու. սա ստերեոտիպային մտածողութեան օրինակ է, գրա մասին կխոսվի ստորև:
- Կանանց և տղամարդկանց մասին խոսելիս, նրանց անունները հիշատակելիս անհրաժեշտ է հետևել հավասարութեան սկզբունքին. օրինակ, չի կարելի տղամարդ գիտնականին հղում անել միայն ազգանունը գրելով, իսկ կնոջը՝ նշելով և՛ անունը, և՛ ազգանունը՝ այդպիսով ցանկանալով ընդգծել այդ գիտնականի կին լինելը:
- Պետք է խուսափել նախադասութիւններն այնպէս կառուցելուց, որ տղամարդիկ ինքնաբերաբար դիտվեն որպէս գործողութեան կատարողներ, իսկ կանայք՝ որպէս այդ գործու-

⁴ Տե՛ս David Crystal, նշվ. աշխ., էջ 369:

⁵ Տե՛ս նույն տեղում:

կուսիան կրողները Եթե կան բռնի գործողություններ, ապա ավելի լավ է ընդհանրապես խուսափել դրանց նկարագրությունից, սակայն ի սկզբանե բռնություն ցույց չտվող որոշ բառեր կարող են նման իմաստներ ենթադրել: Օրինակ, kiss բայը նույնպես կարող է սեռամետ կողմնակալ վերաբերմունք ցույց տալ, ասենք All the boys kissed Mary նախադասության մեջ (ասել է, թե ինչու՞ ոչ Mary kissed all the boys. Հարցը կարող է նույն այլ, ավելի հեռու գնացող մեկնաբանությունների տեղիք տալ):

- Պետք է խուսափել անընդհատ մի սեռի վերաբերյալ օրինակներ բերելուց:
- Պետք է խուսափել տղամարդկանց կանանցից անընդհատ առաջ նշելուց, բացի տղամարդկանց գերակայություն նշանակելուց, բառերի այդ կարգը անգլերեն լեզվի շարադասության մեջ կարող է տղամարդկանց դեմ ենթակալի, իսկ կանանց՝ խնդրի դերում:
- Պետք է խուսափել օրինակներում սեռամետ կամ նվաստացուցիչ այլ հղումներ անելուց:
- Զպետք է մոռանալ նշել այն կին գիտնականների անունները, ում ստեղծագործությունները կամ ուսումնասիրություններն օգտագործվել են, կամ ում գաղափարներից հեղինակն օգտվել է: Մտավոր աշխատանքում տղամարդու և կնոջ դերերի մասին ավանդական պատկերացումները կարող են հանգեցնել այն բանին, որ սկզբնապես կանանց կողմից առաջարկված գաղափարները կարող են վերագրվել տղամարդկանց, կանանց դերը կարող է թերազնահատվել կամ ընդհանրապես անտեսվել⁶:

Եթե Ամերիկյան լեզվաբանների ընկերությունը կարևոր է որպես այս հարցում իրավասու կազմակերպություն, որը նաև մտափիլից հետևում է այդ փոփոխություններին և անգամ ուղղություն է տալիս դրանց, հետաքրքիր է ծանոթանալ աշխարհի խոշորագույն կրթամշակութային միջազգային կազմակերպության՝ UNESCO-ի (Միավորված ազգերի կրթական, գիտական և մշակութային կազմակերպություն) ուղեցույցին:

UNESCO-ում այդ հարցն առաջին անգամ արծարծվել է կազմակերպության 24-րդ Գլխավոր կոնֆերանսում (1987 թ.), երբ կոչ արվեց կազմակերպության ներսում խուսափել սեռը մասնավորեցնող լեզվի գործածությունից: Հետագայում 25-րդ և 26-րդ կոնֆերանսների ժամանակ UNESCO-ն ավելի հստակեցրեց իր դիրքորոշումը այդ հարցում և ավելի վճռական դիրք գրավեց: UNESCO-ի «Ոչ սեռամետ լեզվի ուղեցույցի» ներածության մեջ մասնավորապես նշվում է. «UNESCO-ն մի կազմակերպություն է, որ նվիրված է արդարությանը և մերժում է ցանկացած խտրականություն՝ ուսսայի, սեռի, լեզվի, կրոնի թե այլ պատճառներով և, հետևաբար, անհատների և խմբերի նկատմամբ արդարացի վերաբերմունք ունի Փաստաթղթերի, հոդվածների, էլուվիների, արձանագրությունների ամփոփումների և այլ նյութերի հեղինակները և խմբագիրները պետք է շանան այնպես գրել, որ շամրապնդեն մարդկանց և սեռերի դերերի մասին վիճելի վերաբերմունքները և ենթադրությունները ... Պետք է հիշել, որ ոչ ճշգրիտ բառերի գործածությունը կարող է մեկնաբանվել որպես կողմնակալ, խտրական կամ նվաստացուցիչ, անգամ եթե դրանք նման նպատակ չեն հետապնդել»⁷:

Այս կապակցությամբ ուղեցույցում տարբերակվում են խնդիրների առաջացման երկու պատճառ՝ երկդիմություն և ստերեոտիպեր: Երկու դեպքում էլ առաջարկվում է փոխարինել որոշ բառեր, բաղադրիչներ, արտահայտություններ կամ կառույցներ այնպես, որ դրանք անորոշ իմաստ չունենան, չնվաստացնեն որևէ սեռի (հազվադեպ բացառություններով խոսքն, իհարկե, իգական սեռի մասին է) դերը և կողմնակալ վերաբերմունք չարտահայտեն:

Man, mankind բառերն, օրինակ, կարելի է փոխարինել people, humanity, human beings, humankind, the human species, the human race, we, ourselves, men and women, homo sapiens, one, the public, society, the self, human nature բառերով և կապակցություններով: Այդ դեպքում Man's search for knowledge has led him to improve scientific methodology. նախադասությունը կարող է ունենալ հետևյալ տարբերակները.

The search for knowledge has led us to improve scientific methodology.

People have continually sought knowledge. The search has led them....:

The search for knowledge has led to improvements in scientific methodology⁸.

Առաջարկվում է man բառը փոխարինել ոչ միայն սովորական կապակցություններում այլև դարձվածներում, օրինակ, the average man, man in the street-ի փոխարեն գործածել the average person/individual, people in general, one. Չեն մոռացվում primitive man-ը տարբերակները՝ primitive people or peoples, primitive human beings, primitive men and women), to man (a project)-ը (տարբերակները՝ to staff (a project), to hire personnel, employ staff, operate), ծրագրերի, դասագրքերի, ձեռնարկների և գրքերի վերնազրիբը: Օրինակ History of the Scientific and Cultural Development of Mankind-ի փոխարեն առաջարկվում է պարզապես History of Humanity: Անգամ brotherly բառն անհրա-

⁶ Տե՛ս նույն տեղը:

⁷ UNESCO Guidelines for Non-Sexist Language, p. 1.

⁸ Տե՛ս նույն տեղը, էջ 2:

ծեշտ է համարվում փոխարինել comradely, friendly, co-operative բառերով, թևև հանուն արդարության հարկ է նշել, որ չի առաջարկվում sisterly այլընտրանքը, քանի որ դա նույնպես կհամարվեր սեռամետ լեզու: Նման վերաբերմունք է դրսևորված նաև man բաղադրիչով բաղադրյալ գոյականների նկատմամբ.

businessman

business manager, executive, head of firm, representative, agent, business traveller; (pl.) business community, business people

fireman

fire-fighter, (pl.) fire crew

sportsman

athlete, sportsman, sportswoman

policeman/men

police officer, or (pl.) just 'police, և այլն:

Առաջարկվում է նաև նախադասության կառուցվածքը փոխելու արդեն հիշատակված տարբերակը՝ teacher, learner, individual, և որևէ կոնկրետ սեռ ցույց չափող այլ գոյականները գրել հոգնակիով, իսկ դրանից հետո, դրանց կրկնությունից և ավանդական he-ից խուսափելու համար, գործածել they, their, them, we, our, us դերանունները կամ եզակի թվի դեպքում գործածել he or she:

Ստերեոտիպային մտածելակերպի դրսևորումներից խուսափելու համար ուղեցույցը հանձնարարում է, օրինակ, Transport will be provided for delegates and their wives. նախադասության փոխարեն գրել Transport will be provided for delegates and their spouses or persons accompanying them, իսկ This woman's husband lets her work part-time. նախադասության փոխարեն առաջարկվում է երեք տարբերակ, որոնք լրացուցիչ բացատրության կարիք չեն զգում.

This woman's husband 'lets' her 'work part-time.

The husband says he 'lets' his wife work part-time.

This woman works part-time.

Ստերեոտիպային մտածելակերպ է համարվում girl կամ girls օգտագործելը, երբ խոսքը մի որևէ տեղ աշխատող աղջկա/կնոջ մասին է: Առաջարկվում է girl-ը փոխարինել woman-ով (ընդհանրապես հարկ է նշել, որ արևմտյան երկրներից շատերում սեռական հասունոթյան հասած աղջիկները/կանայք, անկախ իրենց ամուսնական կարգավիճակից, գիտվում և անվանվում են կին, ոչ թե աղջիկ. «աղջիկ» բառը սովորաբար գործածվում է փոքր տարիքի իրական սեռի երեխաների համար): Նաև առաջարկվում է հստակիցնել, թե ում մասին է կամ ում է ուղղված խոսքը՝ անվանելով նրանց աշխատանքային կարգավիճակը, եթե այդ կիրառելի է secretaries, typists, keyboard operators, office assistants, a team և այլն:

Ինչպես խորհուրդ չէր տրվում ասել, օրինակ, The doctor... he, այնպես էլ՝ The nurse... she- (այլընտրանքը՝ The nurses... they կամ the nurse... he):

Ուղեցույցի վերջում հանձնարարվում է Miss և Mrs. ձևերի փոխարեն գործածել Ms., իսկ ավանդաբար դարձած Mr. and Mrs. John Smith-ը փոխարինել Jane and John Smith-ով, Mr. and Mrs. Smith-ով կամ Mr. and Ms. Smith-ով: Այս նրկու փոփոխությունները ակնհայտորեն տրամաբանական են, պատճառաբանված և ընդունելի:

Այնուամենայնիվ, անհրաժեշտ է կրկնել, որ կարևորը այս կամ այն բառի փոխարեն առաջարկվող այլընտրանքի ընդունելի լինել կամ չլինելը չէ, այլ այստեղ քննվող փոփոխությունների տարածվելու միտումը: Կարևորը նաև անգլերեն ուսումնասիրողներին այդ երևույթի մասին ժամանակին տեղյակ պահելը է այն ուսուցանելն է, որովհետև նշված տարբերակներից շատերը վաղուց արդեն ընդունված են կրթված անգլիացիների, ամերիկացիների և այլ անգլիախոսների կողմից, և այդ նորմերի խախտումն արդեն գիտվում է որպես կանխակալ վերաբերմունք, որպես սեռամետ լեզու:

Ամփոփում

В. В. ГАБРИЕЛЯН—Проявление различия родов в английском языке.— В английском языке проблема дискриминационного с половой точки зрения языка (sexist language) начала привлекать внимание начиная с 1960-х годов. Речь идет о таком употреблении языка, которое не выражает скрытой предвзятости к социальной роли мужчин и женщин. Критика в основном направлена на те грамматические структуры и словарные проявления английского языка, которые выражают мировоззрение с мужской точки зрения и таким образом расцениваются как факторы закрепляющие низший статус женщины в обществе.

Основная цель борьбы с дискриминационным характером языка в лингвистике состоит в замене «мужских» существительных, которые употребляются для выражения понятия «общего» рода на такие существительные, которые не выражают какого-либо конкретного рода или могут быть отнесены как к мужскому, так и женскому полу.

В английской грамматике основная проблема состоит в отсутствии одушевленно-личного местоимения среднего рода в третьем лице единственного числа. Указанное является причиной возникающих сложностей при употреблении их после существительных общего рода, когда необходимо избежать вторичного употребления этих существительных в одном и том же предложении.

Дискриминационный с половой точки зрения язык, тем не менее, нужно рассматривать как более широкое понятие, чем простое употребление отдельных слов, выражений и грамматических структур. При более детальном исследовании становится ясно, что в языке и мышлении существует такое множество глубоко укорененных выражений, понятий и позиций, что на первый взгляд невозможно понять и осмыслить их дискриминационный характер.

Предложенные изменения, имеющие целью избежать употребления дискриминационного с половой точки зрения языка, в большинстве случаев становятся необходимыми, они включены в учебные пособия, преподаются в школах и высших учебных заведениях, а в ряде случаев, как, например, в объявлениях, о свободных рабочих местах, где требуется описание и указаны условия работы, несоблюдение этих критериев может быть чревато для работодателей тяжелыми последствиями. Во многих национальных и международных организациях существуют обязательные для сотрудников специальные каноны и правила, предупреждающие употребление дискриминационного языка. Из их числа, приведены примеры правил двух организаций: Американского общества лингвистов (1992) и «Руководство по недискриминационному с половой точки зрения языку» ЮНЕСКО. (24-ая Генеральная конференция ЮНЕСКО, 1987; 25-ая, 1989 и 26-ая, 1991).

Важно своевременно информировать лица, изучающие английский язык, о выше названном явлении, так как многие из описанных правил уже давно укоренились среди американцев, англичан и других англофонов, и нарушение уже установленных норм рассматривается как предвзятое отношение, как дискриминационный с половой точки зрения язык.